№ 225 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11 — 1901 — ՀԻՆԳՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11 № 225

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվան 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են խրատանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
Առեւտրական դպրոցներ մեր երկրում.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տնայնագործական արդիւնաբերութեան գործիչների ժողովը. Գաժառ-Քաթիպայի արձանի բացումը. Նամակ Բագուից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. — Գրական դէմքեր։

## ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ ՄԵՐ ԵՐԿՐՈՒՄ

Բագուում և Ալէքսանդրօպոլում բացվող առեւտրական դպրոցները, միացած Թիֆլիսի առեւտրական դպրոցի հետ, որ բացվեց անցեալ տարի, աւելացնում են մեր կրթական հաստատությունների թիւը, որ առհասարակ աճում է մեր երկրում շատ դանդաղ կերպով։ Ալէքսանդրօպոլցիները շատ փորձեր արին միջնակարգ դպրոց աջողեցնելու իրանց քաղաքում և այժմ այդ հարցը լուծեցին՝ հիմնելով առեւտրական դպրոց։

Թիֆլիսի առեւտրական դպրոցը իսկոյն լցվեց աշակերտներով և դարձեալ զգացվեց պահանջ նոր դպրոցի։ Մենք հաւատացած ենք, որ թէ Բագուի և թէ Ալէքսանդրօպոլի դպրոցներն էլ լիքը կը լինեն աշակերտներով և մեր երկրի կրթական պահանջին լիութիւն տալու համար կարիք կը զգացվի նոր դպրոցների։

Առեւտրական դպրոցները գրաւում են մեր հասարակութեան ուշադրութիւնը ոչ միայն իբրև այնպիսի դպրոցներ, որոնք պէտք է տան մասնագիտական-առեւտրական կրթութիւն, այլ և այնպիսիները, որոնք տալիս են ընդհանուր կրթութիւն։ Այդ է պատճառներից մէկը, որ առեւտրական դպրոցի բացված դռներով ներս է մտնում մատաղ ուսումնածարաւների մի բազմութիւն, որոնելով գրագիտութեան դասեր և փոքր ի շատէ բարեկարգ կրթութիւն։

Պէտք է նկատել, որ առեւտրական դպրոցների հաստատությունը կախված է ֆինանսների մինիստրությունից, որը մի առանձին հոգս է տանում առեւտրական և արդիւնագործական գիտելիքների տարածման վրա Ռուսաստանում և այդ պատճառով ուրախ է լինում, երբ մի որ և է տեղ ինքնաբերաբար միաք է ծագում հիմնելու առեւտրական դպրոց, շուտով տալիս է թոյլատրութիւն բանալու ցանկացած դպրոցը, իսկ մի քանի դէպքերում նոյն իսկ ինքն՝ մինիստրությունն է թելադրում և խրախուսում յարուցանելու առեւտրական դպրոցներ բանալու հարցը։

Ֆինանսների մինիստրության բարի տրամադրությունը և պատրաստակամությունը շատ դիւրացնում են առեւտրական դպրոցներ բանալը մեր երկրի այն բոլոր տեղերում, ուր կայ թէ առեւտրական և թէ ընդհանուր կրթության պահանջ։

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԺՈՂՈՎԸ

Երեքշաբթի, հոկտեմբերի 9-ին, երեկոյեան ժամը 7½-ին, Կովկասեան Գիւղատնտեսական ընկերության դահլիճում կայացաւ կովկասեան տնայնագործական արդիւնաբերության գործիչների առաջին ժողովը, նախագահությամբ ազգնօվ Ա. Փիրալեանի եւ մասնակցությամբ Կովկասի մի քանի տեղերից եկած ներկայացուցիչների ու մօտ 30 անդամների։ Ժողովին ներկայ էր եւ կոմսուհի Ուվարովա։

Յայտնելով ժողովը բացված, նախագահ Փիրալեան բացատրեց ժողովի նպատակը, որ է միջոցներ որոնել Կովկասի տնայնագործական արդիւնաբերությունը զարգացնելու եւ աւելի հաստատ հիմքի վրա դնելու, լուսաբանելով այդ արդիւնաբերության վերաբերեալ մի քանի հարցեր, խորհուրդներով ու ցուցմունքներով օգնության հասնելով գիւղական տնայնագործներին։ Տնայնագործությունը, մանաւանդ գորգերի, կապերտների, շալերի, մետաքսեայ կերպասների, արծաթեայ առարկաների արդիւնագործությունը տնային գործիքներով այնքան զարգացած է Կովկասում եւ կազմում է գիւղատնտեսության այնպիսի մի կարեւոր օժանդակ ճիւղ, որ կառավարությունը հարկ է համարել մի առանձին տնայնագործական կոմիտէտ հաստատել այդ արդիւնաբերության կարիքներն ուսումնասիրելու համար եւ այդ կոմիտէտը գործում է 1899 թուից Թիֆլիսում։

Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուի ներկայացուցիչ պ. Պերեվօշնիկով, ողջունելով ժողովի բացումը, նկարագրեց, թէ Կովկասի տնայնագործական արդիւնաբերության ուսումնասիրության գործին ինչ մեծ ծառայություններ է մատուցել նախկին հոգաբարձու Եանովսկին, որի ղեկավարությամբ ժողովրդական եւ գիւղական դպրոցների ուսուցիչները շատ թանգագին նիւթեր հաւաքեցին այդ ճիւղի մասին, որ եւ հրատարակվեց շրջանի տեղեկագրերի մէջ։ ապա յայտնեց, որ այժմեան հոգաբարձու Զաւադսկին եւս ներշնչված է նոյն եռանդով՝ օգնել այն բոլոր ջանքերին, որոնք ուղղված են զարգացնելու գիւղական տնայնագործությունը։

Պ. Աւետիս Քալանթար, ժողովի փոխ-նախագահը, կարդաց մի զեկուցում, թէ ինչ առաջադիմություններ հնարաւոր է անել տնայնագործական արդիւնաբերությունների մէջ եւ թէ ինչպէս է դրված այդ գործը արտասահմանում, մանաւանդ Սկանդինավեան երկրներում, ուր տնայնագործները ոչ մի երկիւղ չեն կրում մեքենաների մրցումից։ Այդ զեկուցումից երեւաց, որ մեր երկրի մի քանի տնայնագործական արդիւնքները—գորգերը եւ կապերտները, եթէ միայն նրանք յարմարեցրված են արտասահմանի վաճառանոցի պահանջներին, չափի, գոյների եւ նկարների կողմից, շատ մեծ ընդունելություն են գտնում այնտեղ։

Իշխանուհի Մ. Թումանեան կարդաց մի տեղեկագիր «Գորգային արդիւնաբերության կարիքների մասին»։ Դա իսկապէս մի զեկուցումն էր տիկնոջ հիմնած մի արհեստանոցի մասին, ուր չքաւոր աղջիկներ կարող են սովորել գորգագործությունը եւ ապա գիւղերը գնալով՝ զարգացնել այդ արհեստը։ Զեկուցման այն մասը, որ վերաբերում էր գորգագործության տեխնիկայի եւ կարիքների հարցին, բաւական երկար եւ եռանդուն վիճաբանություններ առաջ բերեց, մանաւանդ այն հարցը, թէ պէտք է մտցնել տնայնագործական արդիւնաբերության մէջ մեքենաների օգնությունը թէ ոչ։ Շատերը գտնում էին, որ մեքենաների գործածությունը այն հետեւանքը կունենայ, որ տնայնագործությունը կը դադարի, դառնալով մեքենական արդիւնաբերություն, հետեւաբար կը կորցնէ իր նշանակությունը եւ առանձնայատկությունը։

Հետաքրքիր էր Սուլթան-Կրիմ-Գիրէյի կարճ զեկուցումը Պարսկաստանի Սուլթանաբադ գաւառի գորգային արդիւնագործության եւ անդլիական Գեզլէր Ֆիրմայի գործունէության մասին։ Ոչ պակաս հետաքրքրական էր եւ Փիրալեանի զեկուցումը արեւելեան գորգերի նկարների եւ չափերի մասին. այդ զեկուցումից պարզվեց, որ մեր երկրում գորգագործության արհեստը զգալի կերպով ընկնում է այն պատճառով, որ բոլոր հին նկարները, գոյները այլ եւս չը կան, քանի որ 20 տարուց ի վեր մեր երկրի մէջ գտնված բոլոր հին գորգերը հաւաքվելով արտահանվել են արտասահման եւ այսօր գորգագործը չունի օրինակ թէ նկարների եւ թէ գոյների համար։

Ժողովը կը շարունակվի դեռ եւս 3—4 օր։

Հարկաւոր ենք համարում լրացնել տիկին Թումանեանի զեկուցման մի կէտը. այդ այն է, որ գորգագործության արհեստանոցներ հիմնվել են իշխ. Թումանեանի արհեստանոցից շատ առաջ Կովկասի զանազան

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԳՐԱԿԱՆ ԴԷՄՔԵՐ

—

### ՌԱՓԱԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ

—

Ժամանակը, մարդկության ընդհանուր տրամադրությունը ամեն տեղ էր հնչեցնում իր երգը։ Ամեն տեղ ճնչվածը, դժբաղդացածն է այդ երգի մէջ։ Միայն բռնությունը չէ, որ ամեն տեղ առելի է դարձել. միայն խաւարից ազատվելը եւ լայն ազատություն գրկելը չէ, որ ոգեւորում է, յաղթական աղաղակներ է արձակում, գործել է տալիս։ Հարատահարված դասակարգերի, աղքատների դատն էլ է բարձրանում ամեն տեղ։ Քաղաքական ստրկության շղթաները չեն միայն, որ հառաչանքներ են արձակում. աւելի ցաւագար, աւելի ահեղ են անտեսական ստրկության հանած հեծեծանքները...

Բանաստեղծությունը իջել էր Պարնասի գագաթներից, քաղաքական գործիչների բանտերն էր այցելում, նրանց կախաղանների տակ էր կանգնում. քնարը այլ եւս կոյս, սէր, բնություն չէր երգում, այլ արիւնոտ նահատակներին էր օրբացնում։ Գերմանիայում յեղափոխական բանաստեղծներն էին կարդացվում, Աւստրիայում Մետերնիխի սպանիչ սիստեմի դէմ անէծքներ, վրէժ եւ ազատություն կանչող երգերն էին մարդկանց բերանում։ Իտալիան հերոսական ջանքեր էր գործում մի ազատ հայրենիք ստեղծելու համար։ Այդտեղ բանաստեղծությունը արեան դաշտերն էր երդում, հայրենիքի համար զոհվողներին էր փառաբանում։ Ֆրանսիական եւ անգլիական գրականությունները, մանաւանդ վերջինս, աղքատների, քաղցածների, սոցիալական անարդարությունների տակ ճնչվածների խօսքերն էին խօսում։

Հասարակական իդէալը ամեն տեղ։

Նայենք ռուսաց գրականության, որ աւելի մօտիկում, աւելի անմիջապէս էր ազդում հայ գրողների վրա։ Պուշկինի ժամանակից այդ գրականությունն արդէն ժողովրդական, բուն ազգային գոյն, համ ու հոտ էր ստացել։ Եկաւ մի ուրիշ մեծ տաղանդ—Գոգոլը եւ գրականությունն մի հսկայ քայլ էլ արաւ։ Նա դարձաւ բնական, իրական, իջաւ ժողովրդի մէջ եւ այնտեղ սկսեց որոնել ոգեւորության աղբիւրներ։ Նա դարձաւ հասարակական գրականության եւ չքեղ ծաղիկներ արձակեց. վէպը Տուրգենեվի, Տոլստոյի, Գոնչարովի գրչի տակ, բանաստեղծությունը Նեկրասովի քնարի վրա, երգիծաբանությունը Սալտիկովի պէս մի նշանաւոր ներկայացուցչի ձեռքով, հրապարակախոսությունը Գերցէնի ոգեւորությամբ ու ազնիւ ձգտումներով թեւաւորված, քննադատությունը Բէլինսկու, Չերնիշեվսկու, Դոբրոլիուբովի առաջնորդությամբ հասարակական կարգերն էին փորփորում, ծաղրում, հարուածում, ներկայացնում նրանց ամբողջ մերկությամբ։ Հասարակական գրականությունը աճում է, զարգանում է, միակ արդար ու ճշմարիտ հոսանք է համարվում. գեղարուեստական գրուածքների մէջ որոնվում է ոչ միայն գեղարուեստ. աւելի մեծ չափով որոնվում են նրա մէջ գաղափարներ, առաջնորդող հայեացքներ։

Առանձնապէս մենք անուանեցինք Նեկրասովին. եւ ահա ինչու։ Ռափայէլ Պատկանեանը դեռ ուսանողության ժամանակ ամենից շատ այդ բանաստեղծով էր ոգեւորվում։ Դրա ապացոյցն են երկու ոտանաւոր, մէկը՝ «Երկու բանաստեղծ» վերնագրով, որ փոխադրություն է Նեկրասովից, միւսը՝ «Հետեւելով միշտ օրինաց աշխարհի», նմանողություն է Նեկրասովին։

Յայտնի է թէ Նեկրասովը ինչ առանձնայատուկ տեղ է բռնում ռուսաց գրականության մէջ։ Դա հրապարակախօս էր, նախ աշխատակից մի ամսագրի, ապա խմբագիր մի այլ ամսագրի, որի շուրջը բոլորված էին ժամանակի լաւագոյն, առաջաւոր գրական գործիչները։ Բայց հրապարակախօս-խմբագիրը, առաջադիմական օրգանի գլխաւոր ղեկավարը, գրում էր եւ ոտանաւորներ։ Նրան չէր տուած խոշոր բանաստեղծների աստուածային լեզուն, գեղեցիկ, քնքուշ հնչիւն յանգերը։ Բայց նա գիտէր որ «վշտի տարիներում ամօթ է երգել հովիտների, երկնքի եւ ծովի գեղեցկությունները, սիրականի քնքշությունները»։ Եւ նա դարձաւ հասարակական ցաւերի, թշուառության, հեծեծանքների երգիչ։ Նրան այդ ոտանաւորների մէջ չէին ուզում բանաստեղծ ճանաչել, այլ համարում էին միայն շնորհալի, թէեւ շատ յոռետես, հիւանդոտ հրապարակախօս։ Բայց ո՞վ է այդ հրապարակախօս—բանաստեղծի նման երգել ռուս ժողովրդի դարդերը, նրա հեծեծանքները, ո՞վ է նրա պէս ողբացել, հարուածել, ծաղրել այդ վշտերի ու ցաւերի պատճառները։ Ջերմ յափշտակությամբ էր նա սիրում իր հայրենիքը. բայց ինչպէս.—սիրում էր տեսնել նրան բարեկարգ ու առաջադէմ, սիրում էր տեսնել ժողովուրդը ազատ, իր աշխատանքի տէր, կրթված, գիտակից։ Նա սիրում էր ատելով. նրան չէր բաւականացնում եղածը, աւելի շատ բան էր ուզում իր հայրենիքի համար, իսկ նրան մեղադրում էին թէ գոյները խառնում է, չափազանցացնում է ամեն ինչ։

Ահա այդ բանաստեղծին նմանվելով, մեր Ռափայէլ Պատկանեանը իր «Երկու բանաստեղծ» ոտանաւորի մէջ ծաղրում է հասարակական իդէալներից զուրկ բանաստեղծին.

Լարերիդ երբէք չի տուիր դաղար
Երբ որ գովելու ունէիր պատճառ.
Բայց երբ որ բասրել պէտք լինէր չարին՝
Քնարդ խկոյն կախվում էր պատին։

Այդպէս չանող բանաստեղծներին է, որ անուանում են տենդենցիոզ, հրապարակախօս։ Դառնանք դարձեալ այս անուններին։

Վաղուց է, որ պահանջվում է բանաստեղծից, գեղարուեստագէտից ծառայել լոկ արուեստին, լինել լոկ բանաստեղծ, ամբողջովին, առանց կողմնակի դիտումների եւ ձգտումների։ Բանաստեղծը, ասում են, ամենից բարձր պիտի լինի. նա առօրեայ կեանքի մարդ չէ, նա բարձրերում պիտի ապրէ եւ դէպի բարձրերը պիտի տանէ մարդկանց միտքը, թոյլ տալով, որ ուրիշները արծարծեն կեանքի խնդիրները, լուսաբանեն պակասությունները, ուղղողի, խրատողի, կարգադրողի դեր կատարեն։ Գեղարուեստը օգուտը չը պիտի ունենայ իր առջեւ իբրեւ նպատակ. նա միայն պիտի արտադրէ գեղարուեստական գործեր, տայ գեղեցկություն, էսթէտիկա։

Այսպէս է գրական մի հոսանքի դրօշակը։ Բայց հակառակ եւ—աւելացնենք—աւելի ուժեղ հոսանքը այլ կերպ է դատում։ Գեղարուեստը անմիջապէս կապված է կեանքի հետ. նոյն իսկ բնության գեղեցկությունները գրաւում են մեզ, լեզու են ստանում, նայած մեր ներքին աշխարհի տրամադրության, մեր հակակացողությունների։ Մեր վերաբերմունքը դէպի առարկան, դէպի երեւոյթները—ահա ինչ մեծ հիմք կայ գեղարուեստական բանաստեղծագործության մէջ։ Եւ դա ցոյց է տալիս, որ անհատականությունը չէ կարող մեռնել հեղինակի, բանաստեղծի մէջ։ Կարող է լինել այնպիսի մարդ, որ բացառապէս, զուտ բանաստեղծ լինի, միանգամայն ազատ իր շրջանի, իր ժամանակի ազդեցությունից։ Նկատեցէք. նա մեծացել է յայտնի շրջանում, յայտնի ազդեցությունների տակ, ունի իր պաշտամունքը, իր կրօնը, իր հայեացքներն ու ճա-

տեղերում. մի քանի տարի առաջ Հայոց Բարեգործական ընկերութեան Ախալցխայի բաժինը բաւական մեծ գործունէութիւն ցոյց տուեց այդ ճիւղում. նրա օրինակին հետեւելով, Շուշում եւս բացվեց մի արհեստանոց։

## ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՂԱՑԻ ԱՐՁԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ

Հոկտեմբերի 5-ին սրտի ուրախութեամբ ստացանք Վեհափառ Կաթողիկոսից հետեւեալ կօնդակը.

«Մկրտիչ ծառայ Յիսուսի Քրիստոսի եւ անհասանելի կամօքն Աստուծոյ եպիսկոպոսապետ եւ Կաթողիկոս ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք համազգական նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի. Մեծարգոյ պ. Գրիգորի Զալխուշեանց հարազատի Մայր Աթոռոյ նուիրեալք ողջոյն եւ Հայրապետական օրհնութիւն։

«Գոհունակութեամբ սրտի ընկալաք զգրութիւն ձեր ուղղեալ յԺ ամսոյս որով աւետէք եթէ ի 23 սեպտեմբերիս ունիք բանալ զարձանն կանգնեալ ի վերայ չիրմի հանգուցեալ Ռափայէլի Պատկանեան ազգային բանաստեղծի ի ս. Խաչ վանս Ն. Նախիջեւանի։ Մխիթարեալ ի հոգի ընդ այդ յաջողութիւն ձեր եւ բազմաթեայ վաստակ ի յաւերժացումն անմահ յիշատակի բանաստեղծին եւ հաւատի միանգամայն եթէ արժանի էր որում զչնորհն եւ պատիւ եղեւ, Մեք սովին Հայրապետական կնդակաւ յայտնեմք զչնորհակալիս մեր ձեզ նախ ձեռնարկողիդ եւ վաստակաւորիդ, որ յանձն առեք ի գլուխ կանգնել այդպիսւոյ աշխատութեան եւ աւարտեցիք յաջողութեամբ եւ պատուով։ Օրհնեմք նաեւ զնուիրատու ազգայինս մեր, որք յարգեցին զյիշատակ բանաստեղծին, մասնակից կառուցման արձանին հանդիսանալով։ Օրհնեսցի նաեւ յիշատակ հանգուցելոյն դարուց ի դարս եւ անուն նորա եւ վաստակք կրթիչք եւ ոգեւորիչք լիցին այլոց գրասիրաց։ Մկրտիչ Կաթողիկոս Ամենայն Հայոց։ Թ. 1171 յ $\frac{30}{1 \text{ հոկ.}}$ սեպտեմբերի 1901 ամի ըստ տոմարիս ՌԿԾԱ ի հայրապետութեան մերում ի ք. Տփխիս»։

Գր. Զալխուշեան

## ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Հոկտեմբերի 8-ին

Կիրակի, ամսիս 7-ին, տեղի ունեցաւ Հաջի Զէյնալ Աբդին Թաղիեվի հիմնարկած ռուս-մուսուլմանական իգական դպրոցի հանդիսաւոր բացումը։ Այդ դպրոցը արժանի է առանձին ուշադրութեան. իր գոյութեամբ ու կազմով նա միակն է, միակը՝ ամբողջ Ռուսաստանում։ Այդ դպրոցում պիտի սովորեցնեն եւ սովորեն բացառապէս մահմեդականներ։ Նիստ աչքի ընկնող մի երեւոյթ, որ օտարոտի լինելով հանդերձ՝ յանդուգն ձեռնարկութիւն է հանդիսանում տիրապետող մահմեդական ֆանատիկոսութեան տեսակէտից...

Անազատ կեանքի զաւակը դէպի ազատութեան շաւիղը պիտի մղվի, թրքուհին հրաժեշտ պիտի տայ իր փակ ու նեխած կեանքին, նա պիտի բաժանվի տգիտութեան կաչկանդանքից, պիտի դէն նետէ խաւարի քօղը, շպրտէ մոլեռանդութեան վարագոյրը՝ կեանք անջատող այդ «չարաւաբ» եւ բաց դէմքով կեանք մտնէ, դպրոց յաճախէ...

Մահմեդական հասկացողութեան համար աւելի յանդուգն ձեռնարկութիւն կարող է լինել, քան իգական դպրոցը, որ մի «Հաջի» հիմնարկել է եւ յորդոր է կարդում, որ մահմեդականները իրանց ընտանեկան «անարատ» կեանքը վտանգի մատնեն, թողնեն աւանդականը, «անապական» նիստ ու կացը եւ «անբարոյական» կեանք սկսեն։ Այո, յիրաւի մեծ յանդգնութիւն, զարմանալի յաժառ յանդգնութիւն մի Հաջու կողմից, որ անգրագէտ է, գրել կարդալ չը գիտէ, դիպլօմ չունի...

Հինգերորդ տարին է, որ այդ դպրոցի խընդիրը հրապարակ է հանված. հինգ տարի է, որ իգական դպրոց ունենալու միտքը արծարծվում է, սակայն այստեղի մահմեդական հասարակութիւնը ոչ միայն չը հաւակրեց, ոչ միայն որ եւ է աջակցութիւն ցոյց չը տուեց, այլ եւ իր դժգոհութիւնը, իր տրտունջը ու զայրոյթը արտայայտեց։ Մեծամասնութեան կարծիքով Հ. Զ. Ա. Թաղիեվը լաւ մահմեդական չէ, նա կեղծ է. եթէ լաւ սիրտ, լաւ հոգի ունենար, նա մզկիթ կը չինէր եւ ոչ թէ դպրոց... Այս կարծիքը գոյութիւն ունի եւ այժմ, այն էլ բարձր շրջաններում նոյն իսկ։ Եւ հէնց այս էր պատճառը, որ դպրոցի բացման հանդէսին բացակայում էին, շատ քիչ բացառութեամբ, բոլոր յայտնի հարուստները, չը նայելով որ, բացի լրագրական յայտարարութիւններից, ուղարկված են եղել բոլորին առանձին-առանձին հրաւիրաթերթեր։

Միայն հարուստները չեն, որ դժգոհութիւն են արտայայտում. դժգոհութիւնը ընդհանուր բնաւորութիւն է կրում։ 63 խնդիր է ներկայացրվել աշակերտուհիներ ընդունելու համար, դրանցից միայն երկու խնդիր է, որ տրված է բագուցիներից, մնացածները Թիֆլիսից, Գանձակից եւ ուրիշ տեղերից... Ամբողջ Բագուից միմիայն երկու աղջիկ են տարրող ենք ուսումնասիրել մեր մայրենի կեանքի փաստերը։ Սա սրբապղծութիւն է մաքուր արուեստի երկրպագուների համար։ Բայց միթէ անբնական, շինծու է այն ուղղութիւնը, որ գեղարուեստի մէջ կեանքի փաստեր ուսումնասիրել է պահանջում։

Ո՛չ։ Այնպիսի երկիրներում, ուր չը կայ հասարակական կեանք, ուր հասարակութիւնը ուրիշ միջոցներ չունի իր գաղափարները, տրամադրութիւնները արտայայտելու համար, գրականութիւնն է մնում ժողովրդական կեանքի միակ հայելին, նա պիտի զարգացնէ, մշակէ հասարակական սկզբունքներ, հակումներ։ Շատ սրամիտ կերպով նկատում է Դոբրոլիւբով, որ Ռուսաստանում գոյութիւն ունի միայն պաշտօնական հրապարակայնութիւն. պաշտօնաթերթերում երեւում են գրագիրները, երեկոյթներում—պարողները, կլուբներում—թուղթ խաղացողները, թատրոններում—վարսաւիրների յաճախորդները։ Իւրաքանչիւրը թագցնում է իր հոգեկան կեանքը. եւ բացի գրականութիւնից չը կայ մի այլ ասպարէզ, ուր այդ հասարակութիւնը ցոյց տայ թէ ինչ է ինքը, ինչ է մտածում, ինչ երեւոյթներ է արտադրում։

Ահա այսպիսի ղեկավարող սկզբունքով, ազգային այսպիսի յատկութիւններով սնվեց, զարգացաւ, մեծացաւ ռուսաց գրականութիւնը։ Դա հասարակական գրականութիւն է եւ ռուս ժողովուրդը այնքան է սովորել նրան, այնքան է նրան իր հարազատ, ցանկալի եւ սիրելի սեփականութիւն դարձրել, որ շատ դէպքերում նոյն իսկ պատրաստ է եղել մոռանալ մաքուր արուեստի երկրպագու իր տաղանդաւոր, մեծանուն հեղինակներին եւ բանաստեղծներին։

Այսպիսի գրականութիւնը չէ կարող լինել առանց տենդենցիայի։ Տենդենցիա—մի բառ է սա, որ շատ ծուռ բացատրութիւնների նիւթ է դառել. մի բառ, որ նախապաշարմունքներ է ստեղծել։ Երբ ասում են թէ այս ինչ վիպագրողը, բանաստեղծը տենդենցիոզ է, դրանով ասես ինչ ասված, վերջացրած է համարվում։ Նշանակում է, որ այդ հեղինակը իսկական բանաստեղծ չէ, նշանակում է, որ նա հրապարակախօս է, որ նրանից չէ կարելի ապասել անկեղծ ոգեւորութիւն, կեանքի իսկական պատկեր։

Բայց ինչ է տենդենցիան։ Հեղինակը գիտակցական դիտաւորութիւն է ունեցել ընթերցողի մէջ մի յայտնի միտք զարթեցնել, մի յայտնի զգացմունք շարժել եւ դրանով հասնել մի յայտնի նպատակի։ Ասում են թէ այդ չը պիտի լինի, ասում են թէ գեղարուեստական երկը միայն իդէա պիտի ունենայ։ Բայց հէնց նոյն այդ իդէան է, որ ոգեւորում է հեղինակին տենդենցիոզ գրուածքի մէջ։ Իդէան եւ տենդենցիան կարող են գոյութիւն ունենալ, արտայայտվել միասին։ Տենդենցիան ծագում է այն տեսակ հեղինակների մէջ, որոնք անտարբեր հանդիսատեսներ չեն, որոնք ծառայում են որ եւ է գաղափարի, որոնք մարմնաւորներ են հանդիսանում հասարակական հոսանքների դէմ, մի խօսքով այնպիսի գրական գործիչներ, որոնք լցված են գաղափարներով, որոնք չեն կարող չը նուիրել իրանց սիրտը, իրանց ուժեղ ստեղծագործական շնորհքը այն գաղափարին, որին ծառայում են իրանց կեանքում։ Եւ տենդենցիան ամենեւին չէ խանգարում, որ գրուածքը լինի բանաստեղծական, գեղարուեստական։ Տենդենցիան այնքան վատ ու սարսափելի չէ, ինչպէս երեւակայում է գեղարուեստագէտների այն կուսակցութիւնը, որ միայն գեղարուեստ է պահանջում գրողից։ Իսկական, սրբազան ոգեւորութիւնը երեւան է գալիս եւ տենդենցիոզ գրողի մէջ։ Երկի արժանաւորութիւնը նրա մէջ չէ, թէ արդեօք տենդենցիոզ է գրողը թէ ոչ։ Որոնեցէք բանաստեղծական գեղեցկութիւն, գեղարուեստական վայելչութիւն ամեն տեղ. արհամարհել մի գրականութիւն լոկ այն պատճառով, որ նա տենդենցիոզ է—դա կը լինի նախապաշարմունք, կը լինի մոլորութիւն միայն։

Վերեւ յիշած բոլոր հանգամանքները շատ լաւ ապացուցանում են որ մեր, հայերիս, մէջ էլ հասարակական գրականութիւնը կարող էր առաջանալ։ Փոքր ազգութիւնները գոյութեան մի աւելի հաստատուն խարիսխ չունեն, բացի իրանց գրականութիւնից։ Բայց դրա համար հարկաւոր է, որ գրականութիւնը լինի ազգային, այսինքն՝ ժողովրդի պահանջներից բղխող, ժողովրդի ակնկալութիւններին, մտքին, դիտաւորութիւններին համապատասխանող։ Փոքր ազգերը շատ նեղ ու անձուկ շրջան ունեն՝ գրական ստեղծագործութիւնը զարգացնելու համար. բայց այդ շրջանում էլ հնարաւոր է իսկական ոգեւորութիւնը, գեղարուեստի պայծառութիւնը։

Մենք դիտմամբ այսքան երկար կանգ առանք գրական այդ հարցերի վրա նախ այն պատճառով, որ դրանով չօշափվում է, ինչպէս ասացինք, ռուսահայերի ամբողջ գրական առաջադիմութեան հարցը եւ երկրորդ՝ այն պատճառով, որ մեր տեսութեան առարկան Ռափայէլ Պատկանեանն է, մէկը մեր աշխարհիկ գրականութեան հիմնադիրներից, ամենախոշորը մեր բանաստեղծներից, որին բնորոշելու համար մենք յաճախ գործ ենք ածում տենդենցիոզ բանաստեղծ անունը, մի անուն, որ կարծէք ասում է ձեզ թէ մենք, այնուամենայնիւ, իսկական բանաստեղծ չենք ունեցել։ Ահա այն նախապաշարմունքը, այդ ծուռ հասկացողութիւնը պէտք է մենք հեռացնենք մեզանից։ Եւ այնուհետեւ կարող կը լինենք գնահատել մեր բանաստեղծին՝ նոյն իսկ զուտ գեղարուեստական տեսակէտից, անկախ այն հանգամանքից թէ տենդենցիոզ է նա թէ ոչ։

Դառնանք այժմ այդ բանաստեղծին։

(Կը շարունակվի)

Այդ դպրոցը կոչվում է «Ալէքսանդրեան», յանուն Կայսրուհի Ալէքսանդրա Թէոդորօվնայի։ Կառուցված է ի յիշատակ Նոցա Կայսերական Մեծութիւնների Թագադրութեան։ Հիմնադիր Հաջին այդ նպատակով 1896 թ. ի ապրիլին նուիրել եւ մտցրել է քաղաքային վարչութեան դրամարկղը 125,000 ր. անձեռնմխելի գումար, որի տոկոսներով պիտի պահպանվի դպրոցը, իսկ դպրոցի շինութեան համար մտցրել է 25,000 ր.։ Ապա ձեռնարկելով շինութիւնը Նիկոլայեան փողոցին կից հրապարակում, քաղաքից ձրի ստացած հողաբաժնի վրա, հեռատես հիմնադիրը փոխում է իր մտադրութիւնը, փոխանակ նախորդ ծրագրած փոքրածաւալ մակարդակի, կազմել է տալիս աւելի մեծ մակարդակ եւ սկսում է մի ընդարձակ շինութիւն, որ ապագայում կարողանայ ծառայել պրոգիմնազիայի եւ գիմնազիայի համար։ Սկսում եւ աւարտում է առանց կողմնակի օժանդակութեան եւ փոխանակ նշանակած 25,000 րուբլու, իր սեփական միջոցներից մսխում է 183,533 րուբլի այդ շինութեան վրա...

Դպրոցը միդասեան է լրացուցիչ արհեստագիտական բաժանմունքներով՝ ձեռագործութեան, տնարարութեան։

Դպրոցը կառավարում է հոգաբարձական խորհուրդը։ Հոգաբարձական խորհուրդը կազմում են՝ Հաջի Զ. Ա. Թաղիեվ եւ իր կինը, Բագուի քաղաքագլուխը, Նահանգական Ղազին, ժողովրդական դպրոցների վերատեսուչը, արական գիմնազիայի վերատեսուչը, իգական գիմնազիայի տեսչուհին եւ երեք հոգի ընտրվածներ պատուաւոր մուսուլմաններից։ Խորհուրդը որոշել է ունենալ 35 ձրի գիշերօթիկ աշակերտուհիներ եւ 30 հոգի էլ մասնաւոր վճարով, տարեկան 100 րուբլի միայն։ Վերջին այս որոշումը կը պահպանվի առաջին 3—4 տարվայ ընթացքում միայն։

Առ այժմ դպրոցի եկամուտը կազմում է Թաղիեվի նուիրած անձեռնմխելի գումարի, 125,000 րուբլու, տոկոսը եւ շինութեան ներքին յարկից ստացած վարձը։ 1896 թ. ապրիլ ամսից մինչեւ ներկայ հոկտեմբեր ամիսը ստացված է դրամագլխի հաշիւից 26,023 ր. 46 կոպէկ տոկոս—այնպէս որ դպրոցի գոյութիւնը տնտեսականի վերաբերմամբ ապահովված կարելի է համարել. իսկ ինչ վերաբերում է ուսումնականին, այդ արդէն ապագային պիտի թողնել, յուսալով որ Թուրք ինտելիգենցիան չը պիտի զլանայ իր աջակցութիւնը ցոյց տալու հազուագիւտ հիմնադրի ձեռնարկածը իր կոչման բարձրութեանը հասցնելու համար։ Պատուաւոր հոգաբարձու եւ հոգաբարձական խորհրդի անդամներ՝ Զ. Ա. Թաղիեվ, Ս. Ա. Ալիեվ, Ս. Ա. Ալիեվ, Ս. Ա. Ալ

հրդի նախագահ է նշանակվել Թաղիեվը, որի մահից յետոյ պիտի փոխարինեն նրա ժառանգները ըստ աւագութեան։

Ն. Դաւթեան

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, հոկտեմբերի 9-ին

Ամեն մի հասարակական գործիչի մատուցած ծառայութիւնները չափւում են նրա աշխատանքի տոկունութիւնով, ձգտումների անշահասիրութիւնով եւ գաղափարին հաւատարիմ մնալովը։ Հէնց այս երեք տեսակէտից նայելով, ես ցանկանում եմ յիշեցնել ընթերցողին մի մարդու ծառայութիւնների մասին, որին թէեւ ճանաչում են բոլոր հայերը, բայց դժուար թէ արժանաւոր կերպով գնահատում լինեն։

Խօսքս վերաբերւում է հայկական երգեր տարածող եւ կատաւոր խմբեր կազմակերպող պ. Քրիստափոր Կարա-Մուրզային։ Քանի-քանի տարի է արդէն, որ այդ անխոնջ գործիչը նուիրել է իրան մի համակրելի գաղափարի երագործման—ժողովրդականացնել այն բազմաթիւ եւ մեծ մասամբ անկեղծ զգացմունքով ներշնչված՝ երգերը, որոնք բղխել են հայի վշտալի սրտից, բայց կամաց-կամաց ենթարկվել են ժառացութեան կամ այլափոխման։ Կարա-Մուրզան նպատակ է դրել այդպիսի երգերին նոր կենդանութիւն տալ եւ հասարակութեան սիրելի դարձնել նրա մայրենի երգը, այլ եւ համերգների միջոցով ծանօթացնել այլազգիներին հայկական եղանակների հետ։

Թէ որքան են աջողվել նրան այդ ժողովրդութիւնները, կարելի է դատել այժմ, երբ Կովկասեան ցուցահանդէսի թատրոնում պ. Կարա-Մուրզայի կազմած երկսեռ խումբը (զէյթունցու եւ ախալքալաքցուհու տարազով հագնված) երկու օրից մէկ երգում է խուռն հասարակութեան առաջ եւ ուրեմն միջոց կայ նկատել, թէ որպիսի ընդունելութիւն է գտնում նա հանդիսականների կողմից։ Պէտք է խոստովանել, որ չը նայած խմբի աղքատ ուժերին, հասարակութիւնը բաւական հաճութեամբ է լսում «Մեր հայրենիք», «Էջմիածին», «Ջան գիւլում» եւ այդպիսի երգեր. գոնէ դա երեւում է այն բուռն ծափահարութիւններից եւ կրկնողութիւններից, որով հանդիսականները վարձատրում են յարգելի խմբապետին եւ երգիչներին, եւ այս—չը նայած այն մրցման, որ առաջ է գալիս ռուսաց եւ վրաց խմբերի ներկայութիւնից մի եւ նոյն թատրոնի բեմի վրա։

Այս փաստը պերճախօս ապացոյց է, որ պ. Կարա-Մուրզայի եռանդը իզուր չէ կորչում, եւ նա կարող է համոզված լինել, որ իր ձեռնարկած գործը տալիս է ցանկալի պտուղներ։ Ես մի կողմ եմ թողնում քննադատական հայեացքը խմբերի կազմակերպութեան, եղանակներ յօրինելու կամ փոփոխելու վրա. թող դա լինի մասնագէտների կամ հմուտ անձանց իրաւունքը։ Իմ նպատակս է շեշտել միմիայն մի կէտի վրա՝ այն է, որ մի այդպիսի եռանդուն, անշահասէր եւ անձնանուէր (թող սա չափազանցութիւն չը համարվի) գործիչ, ինչպիսին է պ. Ք. Կարա-Մուրզան, իրաւունք ունի վայելելու մեր հասարակութեան կողմից, եթէ ոչ համակրանք, գոնէ անաչառ վերաբերմունք դէպի իր գործը...

Եւ ահա այժմ այդ փորձված խմբապետը ի ցոյց է հանել հայ եւ այլազգի հասարակութեան առաջ իր կատարած գործերի մի փոքրիկ նմուշը. ասում եմ մի փոքրիկ, որովհետեւ այժմեան խումբը չէ փայլում ձայների ճոխութեամբ, մինչդեռ Կարա-Մուրզան ունեցել է աւելի աջող կազմակերպած խմբեր։

Թող ուրեմն՝ անաչառ մարդիկ տեսնեն այս օրինակը ցուցահանդէսի բեմի վրա եւ համոզվեն, որ հազուագիւտ բան է մեր դարում եւ մեր հասարակութեան մէջ լինել այդ ատիճան տոկուն, անվհատ եւ սկզբունքին հաւատարիմ։ Եւ այդպիսի գործիչին պէտք է յարգել, համակրել եւ չը զրկել ամեն մի աջակցութիւնից նրա ձեռնարկութիւնների մէջ (օր. ցանկալի կը լինէր միջոց տալ Կարա-Մուրզային ունենալ մշտական եւ կանոնաւոր խումբ, փոխանակ ժամանակաւոր եւ կամաւորի)։

Միքէլ

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաեվիչ երէկ, հոկտեմբերի 10-ին, երկաթուղու արտակարգ գնացքով մեկնեց Բօրժօմից եւ գիշերով անցնելով Թիֆլիսից՝ ուղեւորվեց դէպի Բալաջարի—Պետրովսկ—Վ. Վոլոչիսկ։

—

Հոկտեմբերի 23-ին Թիֆլիսում կը բացվի Անդրկովկասեան երկրի անասնաբոյժների հասմաժողովը, նախագահութեամբ ներքին գործերի մինիստրութեան անասնաբուժական բաժանմունքի կառավարչի օգնական Բօմերի։ Հասմաժողովը գլխաւորապէս կը զբաղվի միատեսակ միջոցներ մշակելու հարցով ամբողջ Անդրկովկասում ժանտախտի եւ այլ տարափոխիկ հիւանդութիւնների դէմ։

—

«Будильникъ» ռուս ծաղրական թերթը հետեւալ կերպով է քննադատում Վ. Վէլիչկոյի «Нефтяной фонтанъ» պիէսը. «Нефтяной фонтанъ», Վ. Լ. Վէլիչկոյի եւ ընկ. կոմեդիան, որ խաղացվեց Փոքր թատրոնում, գրական կոմեդիա չէ, այլ բեմական մի գրուածք, որ հիւսված է փաստերից, լուրերից, բամբասանքներից, որոնք տարածված են Կովկասում նաւթային գործիչների հարստութեան նախանձող հասարակութեան մէջ... Այս նիւթը կարող էր պէտք գալ մի չարամիտ պամֆլէրի կամ մի ծիծաղելի ֆարսի համար, բայց նա ընդհանուր ոչ մի բան չունի մաքուր գրականութեան հետ, առաւել եւս գեղարուեստական թատրոնի բեմի հետ... «Нефтяной фонтанъ»-ի ներկայացումը Փոքր թատրոնում միայն թիւրիմացութեան արդիւնք է։ Եթէ պ. Վէլիչկոյին հարկաւորվել է դրամատիքական փառք, այդ դէպքում այս տեսակ պիէսները ամենահեշտ ճանապարհն են, բայց այդ ճանապարհը չը պէտք է անցնէ Փոքր թատրոնի բեմի վրայով։

—

Ստոկհոլմում չվէդական լեզուով նորերում լոյս տեսաւ Մ. Գորկիի գրուածքների ժողովածուն՝ յայտնի կրիտիկոս Գէօրգ Բրանդէսի առաջաբանով, որի մէջ Բրանդէս մեծ գովասանքով է խօսում Գորկիի տաղանդի մասին։ Բացի այս ժողովածուից Հէլսինգֆորսում առաջիկայ նոյեմբեր ամսին լոյս կը տեսնի նոյն ռուս հեղինակի գրուածքների ֆիննական թարգմանութիւնը։

—

Թիֆլիսի նահանգական դատարանի նախագահը, տեղեկութիւն տալով Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնակատարին, թէ նահանգական դատարանում բացվել է երդուեալ հաւատարմատարների եւ նրանց օգնականների խորհրդակցական բիւրօ, խնդրում է յայտարարութիւններ կախել այդ մասին բոլոր քաղաքային հիմնարկութիւնների մէջ։ «Ցանկալի էր,—ասում է այս առիթով «Тифл. Листокъ» լրագիրը,—որ խորհրդակցական բիւրօյի բացման յայտարարութիւնը թարգմանվէր տեղական լեզուներով եւ գիւղական վարչական մարմինների միջոցով տարածվէր գիւղական ազգաբնակութեան մէջ»։

—

«Каспій» լրագիրը հաղորդում է, թէ անդրկովկասեան երկաթուղու Բագու կայարանում բացվում է հեռագրական ուսումնարան, որտեղ արդէն ընդունվում են աշակերտներ՝ նախապատրաստվելու հեռագրական ծառայութեան համար անդրկովկասեան երկաթուղու զանազան գծերի վրա։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Աշնանային եղանակները սկսվեցին շատ սուր կերպով. ահ ուիթը, տաս օր է, որ շարունակ անձրեւներ են տեղում եւ եղանակները շատ ցրտել են։ Այս տարի խաղողի բերքը այնքան վատ եղաւ, որ քաղաքում գինը շատ բարձրացաւ, եւ գինին թէ թանգ կը լինի եւ թէ քիչ։ Արտահանվելու շատ քիչ գինի է լինելու»։

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Francfurter Zeitung» լրագրի թղթակիցը հաղորդում է Կ. Պոլսից, թէ ռուսաց դեսպան Զինովիեվ, սուլթանի մօտ ունեցած վերջին ունկնդրութեան ժամանակ, տուեց նրան մի յիշատակագիր Հայաստանում պատահած վերջին դէպքերի մասին։ Յիշատակագրի մէջ մի առ մի թւած են այն նշանաւոր անցքերը, որոնք տեղի են ունեցել մօտ ժամանակներում, եւ պահանջված է պատժել վարչական ատիճանաւորներից շատերին, նոյնպէս եւ երառնդուն միջոցներ ձեռք առնել քրդերի գազանութիւնների դէմ։ Ապա ռուսաց դեսպանը մատնացոյց է անում այն հանգամանքի վրա, որ շատ սերբիական ընտանիքներ, որոնք փախել էին Հին-Սերբիայից եւ ապա վերադարձել հայրենիք սուլթանի թոյլտուութեամբ, ձերբակալվել են վերադարձից յետոյ։ Դեսպանը պահանջում է անյապաղ ազատել նրանց եւ երաշխաւորել, որ նոյն վիճակին չեն ենթարկվի ուրիշ ընտանիքներ, որոնք վերադառնում են Հին-Սերբիա։

—«Pro Arménia» թերթը տպագրել է մի հեռագիր Ռէշտից, որի մէջ տեղեկութիւններ են հաղորդվում Մուշի վերջին անկարգութիւնների մասին։ «Ցուլիսի 2-ից սկսած,—ասված է հեռագրում,—Մուշի շրջակայքի մեծ մասը հրդեհի ասպարէզ է դարձել եւ այնտեղ անընդհատ կատարվում են ամենասարսափելի սպանութիւններ։ Մասնիկ, Գուրավու, Իկատ, Շակլան, Բզարվու, Տալուարիկ, Գէլիգուզան եւ Շէնիկ գիւղերը այրված ու կործանված են զինուորների եւ քրդերի ձեռքով։ Այս աւերված գիւղերի աւերակների եւ մոխրի վրա տեղաւորվել են աշիրէթները եւ քրդերը։ Պետութիւնների միջամտութիւնը անյապաղ անհրաժեշտ է։

—Սալոնիկից հաղորդում են, թէ թիւրք զինուորները սեպտեմբերի 29-ին Մոնաստիրում յարձակումն գործեցին ֆրանսիական հիւպատոսի վրա։ Ցանցաւորները իսկոյն ձերբակալվեցին եւ ուղարկվեցին բանտ։ Մոնաստիրում գտնվող զինուորականների գլխաւորը նոյն օրն եւ եթ եկաւ հիւպատոսից ներողութիւն խնդրելու։ Սա արդէն օտարերկրեայ հիւպատոսների վրա գործած յարձակման երկրորդ դէպքն է։ Ինչպէս յայտնի է, առաջին դէպքը պատահել էր Պրիզրէնում, որտեղ յարձակման էր ենթարկվել աւստրիական հիւպատոսը։

—«Français» լրագիրը ստացել է հետեւեալ հեռագիրը Տունիսից. «Լուրեր են տարածված, թէ դատաստանական իշխանութիւնները զբաղված են մի շատ նշանաւոր գործով։ Տունիսում ձերբակալված էր մի թիւրք օֆիցէր, որին մեղադրում էին խարէական գործերի մէջ։ Սակայն քննութիւնը ցոյց տուեց, որ այդ օֆիցէրը ուղարկված էր Տունիս թիւրքական զինուորական մինիստրի կողմից ապատամբեցնելու արաբներին Ֆրանսիայի դէմ այն դէպքում, եթէ դիպլոմատիական յարաբերութիւնների խզումը Թիւրքիայի եւ Ֆրանսիայի մէջ վերջանայ պատերազմով։ Բացի այս օֆիցէրից Տունիսում եւ Ալժիրում գտնվում են եւ ուրիշ թիւրք գործակալներ, որոնք ուղարկված են այնտեղ նոյն նպատակով»։

—Տուրինի «Stampa» լրագրի հաղորդած տեղեկութեանը նայելով, որ արտատպել է եւ «Tribuna» կիսապաշտօնական թերթը, իտալական թագաւոր Վիկտոր Էմմանուէլ պատրաստվում է իր ամուսնու հետ միասին այցելել Պետերբուրգ։ Արքայական զոյգին կուղեկցեն մինիստր-նախագահ Ցանարդէլլի եւ, երեւի, արտաքին գործերի մինիստր Պրինէտտի։

—Կ. Պոլսից հաղորդում են «Berliner Tageblatt» լրագրին, թէ Մոնաստիրի մօտ գտնվող մի բուլգարական վանքում գտնված են զէնքեր, դինամիտ եւ ռադամմերք։ Իշխանութիւնները գրաւեցին գտնվածը եւ ձերբակալեցին վանահօրը եւ մի քանի աբեղաների, որոնք մակեդոնական կոմիտէի անդամներ էին։ Մատնութիւնը արել է վանքի աբեղաներից մէկը։ «Այս փաստը,—գրում է թղթակիցը,—շատ վատ տպաւորութիւն գործեց Կ. Պոլսի բուլգարական դեսպանութեան վրա, որը այս պատճառով չէ կամենում պաշտպան հանդիսանալ ձերբակալվածներին»։

## „ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

9 հոկտեմբերի

ՏԱՄԲՕՎ։ Տամբովի գաւառական զէմստվոյի ժողովը, ի յիշատակ ճորտութիւնը վերացնելու քառասնամեակի, վճռեց կառուցանել դպրոց Լավրովսկայա աւանում, որոշելով 4,000 ռուբլի։ Դպրոցը կը պահվի զէմստվոյի հաշուով։

ՎԱՐՇԱՎԱ։ Շրջանի միջնակարգ դպրոցներում մշակվում է բուսաբանական էկսկուրսիաների կազմակերպութեան ծրագիրը եկող տարում։

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴ։ Շոգենաւային ընկերութիւնը դադարեցնում է այսօր մարդատար շոգենաւերի դէպի Բիբինսկ ուղարկելը, Ունժա գետի սառչելու պատճառով։

ՄՕՍԿՎԱ։ Հոկտեմբերի 9-ին դատաստանական պալատում հաստատվեց սատրովէր Բէլեակովի կտակը, որը մօտ երկու միլիոն է թողել իր հաւատակիցներին։

ԼՕՆԴՕՆ։ Կիտչենէր հեռագրում է Պրէտորիայից. «Հոկտեմբերի 1-ին անգլիական առանձին զօրաբաժինները հաղորդեցին, որ սպանվել են 25 բօէրներ, վիրաւորված են 18, գերի են վերցրված 190 եւ անձնատուր եղան 90 բօէրներ։ Վրայդէտ շրջանը Բօտայի բերած զօրաբաժինը այժմ յետ է մղված դէպի Էրմէլօ շրջանը, իսկ տեղի վրա գտնվող զօրաբաժինները ցրված են. անգլիական զօրքերը չփման մէջ են նրանց հետ։ Եղանակը շարունակում է աննպաստ լինել, մի բան, որ շատ դժուարացնում է անգլիական զօրքերի շարժումը։ Հատատված են ոստիկանական գծեր զանազան ուղղութեամբ։ Գիշերապահ զինուորների խումբը, որ ուղարկել էր գնդապետ Պիլչերի զօրաբաժինը, հոկտեմբերի 6-ին գերի ընկաւ «խակի» հագած բօէրների ձեռքը Սուտֆայլտի մօտ։ Կապի գաղթականութեան մէջ շատ նեղն է ընկած Սմուտս, որը գտնվում է Գրաֆֆրէյնատից դէպի հիւսիս։ Ներքին շրջաններում եւ հարաւում բոլորը մաքրված է բօէրներից, բացի Գուտտուրմի եւ Մէդիամիլտ շրջաններից, ուր գտնվում են Շէպէրսի զօրաբաժնի մնացորդները։ Կապի ապատամբները աշխատում էին շարժվել Կալվինից դէպի հարաւ, բայց յետ մղվեցին»։

ՊԱՐԻԶ։ Անգլիայից Մաքսիմի սիստեմի 150 թնդանօթներ են ուղարկված Հնդկաստան, որտեղից հաղորդում են հակաբրիտանական շարժման մասին տեղական զօրագնդերի մէջ, որ առաջացրել են անգլիացիների կրած պարտութիւնները Տրանսվաալում։

ՍՎԱՏԱՆՈՒ։ Խսինինում հանգստութիւնը վերականգնված է։ Մահվան պատժի են ենթարկված 140 ապստամբներ։

ՊԷՆԶԱ։ Հոկտեմբերի 9-ին, ցերեկով, ուրալեան կայարանում, պահեստի ճանապարհի վրա կանգնած չորս վագոններ գաղթականներով խորտակվեցին։ Տասն եւ մէկ վիրաւորվածներ հիւանդանոց են ուղարկված։

ԲԱԹՈՒՄ։ Դումայի նիստում հոկտեմբերի 8-ին յայտարարվեց քաղաքային գործերին վերաբերեալ նահանգական ատեանի վճիռը, որով վարչութեան անդամ Վօլսկու, հոգեւոր վարչութեան պատգամաւորի եւ 19 ձայնաւորների դէմ քրէական դատ է սկսվում, մեղադրելով նրանց բոլորին պատիժների կանոնադրութեան 1424 յօդուածի համաձայն։

Հոկտեմբերի 8-ին Օդուրգէթում պօստ-հեռագրատան գրասենեակի գլխաւորին սպանեց Տօտրբաձէ ծառան։ Ցանցաւորը մահացու վէրք հասցրեց մէջքում իր զոհին։

ԲՕՄԲԷՅ։ Զրահակիր «Մարաֆօն» հասաւ այստեղ Կօվէյտից, ուր նրան փոխարինեց զրահակիր «Պօմօն»։ «Մարաֆօն» հաղորդում է, որ Կօվէյտում ամեն ինչ հանգիստ է։ «Պօմօն» ափ չը հանեց չէյխ Մախարուկի համար նշանակված թնդանօթները, որովհետեւ այլ եւս չեն կարծում, որ կարող են նոր ընդհարումներ առաջանալ տեղական արաբական ցեղերի միջեւ։ Նէջիի էմիրը վերադարձաւ երկրի ներսը։

ԼՕՆԴՕՆ։ Կրաուզէի գործը նորից յետաձգված է մի շաբաթով։

ԲԵՐԼԻՆ։ Լրագիրների հաղորդած տեղեկութիւնները այն բանի առիթով, որ իբր թէ գերմանական կառավարութիւնը դիտաւորութիւն ունի առհասարակ չը դադարեցնել առեւտրական դաշնագիրները, «Norddeutsche Allgemeine Zeitung» յայտնում է, որ այդ հայեացքը կատարելապէս հասկանալի է, որովհետեւ մշակված է արդէն մաքսային նոր սակագին, որի օգնութեամբ գերմանական կառավարութիւնը յայս ունի առեւտրա-քաղաքական յարաբերութիւնները նորից կանոնաւորել ուրիշ պետութիւնների հետ, մանաւանդ տեղական ագրարային մթերքներին աւելի մեծ հովանաւորութիւն ցոյց տալու պայմանով։ Առհասարակ դաշնագիրները չը դադարեցնելու վճիռը համազօր կը լինէր այն օտար պետութիւնների դրութեան զօրեղանալուն, որոնց հետ մենք կամենում ենք դաշնագիրներ կապել նոր հիմքերով։ Արդեօք կը յայտարարվի գոյութիւն ունեցող առեւտրական դաշնագիրների դադարեցումը եւ ե՞րբ նա տեղի կունենայ, դա կախված է մաքսային նոր սակագին մտցնելու հարցից եւ բանակցութիւններից ուրիշ պետութիւնների հետ։

10 հոկտեմբերի

ՐՕՍՏՕՎ ԴՕՆԻ ՎՐԱ։ Ազովում սարսափելի յանցանք է կատարված. եօթանասնամեայ պառաւ կին Պոլուէկտովային սպանեց իր հարազատ որդին, դանակ խրելով նրա կողքում արտ մօտ այն պատճառով, որ մայրը հրաժարվեց նրան փող տալ։

ՏԱՇԿԷՆՏ։ Կէսօրին, զինուորական մինիստրի ներկայութեամբ, տեղի ունեցաւ տաշկէնտ-օրէնբուրգեան երկաթուղու աշխատանքների բացումը։ Հանդէսն սկսվեց զինուորական եկեղեցիների բարեկարգիչ Բօգօրոդիցկու քարոզով, որի մէջ ասեց հետեւեալը. «Այսօրվան օրը ոսկէ տառերով կը գրվի Տուրկեստանի տարեգրութեան մէջ. աւագաղոյն եւ քաջարի տուրկեստանցին, երկրի պարծանքը, երկաթուղու առաջին քարն է դնում. դրան երանի էր տալիս երկրի բարեկարգող գեներալ Կաուֆման։ Այդպէս, մեծ մարդկանց դաղափարները ապրում են նրանց կրողներից յետոյ էլ։ Աստուծու կամքով, Միապետի հրամանով իրագործվում է երկրի հանգուցեալ հրամանատարի միտքը։ Մեր հանդէսը նեղ-տուրկէստանեան չէ, այլ եւրոպական. դա կուլտուրայի, մեր պատմական միսիայի յաղթանակն է Ասիայում, յաղթանակ բանականութեան։ Աղօթենք Աստուծուն աշխատանքների աջող եւ շուտ աւարտման համար»։ Թագաւոր Կայսրի համար երկարակեցութիւն մաղթելու ժամանակ տեղի ունէր թնդանօթաձգութիւն եւ հրացանաձգութիւն հանդէսին ներկայ եղող զօրքերի կողմից։ Մաղթանքից յետոյ մինիսարը առաջարկեց թագաւոր Կայսրի կենացը, որը ծածկվեց հազարաւոր ձայների զօրեղ ուրայով։ Զորս

ժամին բացվեց գիւղատնտեսական ընկերութեան տօնավաճառային ցուցահանդէսը մինիստրի ներկայութեամբ։

ՄՕՆՍՕ-ԼԷ-ՄԻՆ։ Փոփոխված հրացանների վաճառումը, որ մի առժամանակ տեղի էր ունենում, արգելված է։ Արդէն ծախված հրացանները պէտք է յետ վերադարձնվեն, հակառակ դէպքում այդպիսի հրացան ունեցողներին սպառնում է թէ յարքունիս գրաւումն եւ թէ պատիժ։

ՍՕՖԻԱ։ Պետական յանձնաժողովը որոշեց երաշխաւորութեամբ արձակել Իվանչէվ եւ Տօնչէվ դատի ենթարկված մինիստրներին, միայն յիսուն հազար լէվ գրաւական մտցնելու պայմանով։

ՊԱՐԻԶ։ Պատգամաւորների ժողովի Պատասխանելով Բալիի ճառին, որը առաջարկեց, թէ պէտք է օրէնքով որոշել մինիմալ օրավարձ եւ 8 ժամվայ բանւորական օր հանքերում, Վալդէկ-Ռուսսօ յայտնում է, թէ կառավարութիւնը պատրաստ է քննադատութեան ենթարկել ըէֆորմները, բայց մեծ զգուշութեամբ, եւ թէ ինքն, Վալդէկ-Ռուսսօ, չէ կարող խոստումներ տալ, որոնք չեն կարող իրագործվել։ Պատգամաւորների ժողովը անյետաձգելի է համարում առաջարկութիւնը, մերժելով մի եւ նոյն ժամանակ կառավարութեան չընդունված պահանջը՝ հարցը անյապաղ քննադատելու վերաբերմամբ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

**Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ**

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.
Կ. Մ. Զիկովանցի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Ե. Ի. Գզելիեվ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.
Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ա. Գ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ն. Ն. Ռոսսոմբէկով—5—6 ժ. վիրաբուժութեան և մորթու հ.
Ա. Ն. Ծպակովսկի—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբոյժ), վեներ. և մորթու հ.
Գ. Ա. Թարխանեանց—7—7½ ժ. ներքին և երեխայոց հ.
Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Օ. Ս. Առվանիթակի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

Հայ սեմինարիա աւարտած մի երիտասարդ ցանկանում է ուսուցչական ինստիտուտից ցէնզ ստանալ, բայց պատրաստվելու համար կարօտ է դրամական օժանդակութեան, ուստի խնդրում է բարերար անձանց ուշք դարձնել իր խնդրին։ Համաձայնում է ընտանիքներում հայերէնի դասեր վերցնել, հակառակ դէպքում նպաստաւոր պայմաններով գործակատարութիւն յանձն առնել։

Դիմել Մօղնու ս. Գէորգ եկեղեցու միաբան Վարդան քահանայ Տէր-Ղեւոնդեանցին։ 3—3

Հոկտեմբերի 1-ից բացված է մօդային խանութ

„ԱՇԽԱՏԱՆՔ“

անունով։ Ընդունվում են են պատուէրներ կանանց եւ երեխաների շորեր կարելու։ Բէբուտովսկայա փողոց (նախկին Սադովայա), տուն № 48, Սերգիեվսկայա փողոցի հանդէպ։
(հ.) 2—4

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Օր. Սաթենիկ
ԹԵՐՄԱՋԱՆԵԱՆՑ
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ
Առաւօտեան ժամը 9—2
Երեկոյեան ժամը 5—7
Վանքի մեծ փողոց, տուն Մարտիրոսեանցի։
(հ. կ.) 13—60

## ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

### ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

յայտնում է ի գիտութիւն ընդհանուրի, որ այս տարվայ սեպտեմբերի 23-ին գողացված են, քաղաքային դրամարկղը կոտրելով, առաձեռն դրամ եւ հետեւեալ տոկոսաբեր թղթերը։

I. Պետական 1000 բուբլիանոց ըէնտայի 4%-աբեր չորս հատ արժէթղթեր, որոնց №№ են 1) սէրիա՝ 36, № 2175, 2) սէրիա՝ 81 № 2603, 3) սէրիա՝ 185, № 0212, 4) սէրիա՝ 209։ № 4183 եւ մի արժեթուղթ նոյն ըէնտայի 100 բուբլու արժողութեամբ, սէրիա՝ 187, № 0881։

Բոլոր հինգ արժեթղթերն էլ ունեն 1901 թւի դեկտեմբերի 1-ի կուպոնները։

II. Թիֆլիս քաղաքի 3-րդ փոխառութեան 1000 բուբլիանոց, դեռ եւս ըէալիզացիայի չենթարկված, օբլիգացիաներ, իւրաքանչիւրը 1901 թւի դեկտեմբերի 1-ի կուպոններով՝ հետեւեալ №№-ով.

155-ից մինչեւ 159,
164 » » 346,
348 » » 457,
459 » » 581,
583 » » 750,

Ընդամենը 592 թերթ։

Այդ թերթերի վրա դեռ եւս համարներ, ըստ կարգի, եւ հաշւապահի ստորագրութիւնը չը կան։ 1—3

### ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտնում է ի տեղեկութիւն ընդհանուրի, որ Կովկասի պ. Կառավարչապետի կարգադրութեամբ, Թիֆլիսի քաղաքային խորհրդի ձայնաւորների առաջիկայ ընտրութիւնները կը կատարվեն երեք ընտրողական ժողովներում, որոնցից առաջինում կը մտնեն ոստիկանական 1, 2, 3 եւ 4 քաղաքամասերի ընտրողները, երկրորդում—5, 6 եւ 7 քաղաքամասերի ընտրողները, իսկ երրորդում—8, 9 եւ 10 քաղաքամասերի ընտրողները։ Ձեռնամուխ լինելով ընտրողական ցուցակների կազմութեան, Քաղաքային Ուպրաւան հրաւիրում է անշարժ կայքերի տէրերին մաքրել իրանց կալուածքները գնահատական տուրքի ապառիկներից, որոնք հաշւած են մինչեւ 1901 թւի յուլիսի 1-ը։ Սրա հետ միասին յայտարարվում է, որ այն անձինք, որոնք անշարժ կայքեր կամ առեւտրական-արդիւնաբերական ձեռնարկութիւններ ունեն քաղաքի զանազան մասերում, բարեհաճեն առաջուց յայտնել Ուպրաւային, թէ իրանք ընտրողական ժողովներից որին են կամենում մասնակցել ձայնաւորների ընտրութեան ժամանակ։ (կ. չ. 2—3



ՊԱՀԱՆՋԵՑԷՔ ԱՄԵՆ ՏԵՂ
ԻՍԿԱԿԱՆ
„ՕԴՕԲՐԻՆ“ Մ. Վ. ԼԵՒԵԴԷՎԻ

դեղը ոչնչացնում է կատարելապէս մի քանի օրում հնացած կոշտերը (մազօլները) եւ եղունգները արմատով, միայն կառավարութեան հաստատած էտիկէտով № 22473.

Ծախվում է Թիֆլիսում, Դեղատան Ապրանքների Առեւտրի Կովկասեան Ընկերութեան մէջ եւ Բագուի եւ Բաթումի բաժանմունքներում։

3—10

ՏՆԱՅԻՆ ՀԱՇ

Հոկտեմբերի 1-ից, Բագումի (Զաղրօվայա եւ Վօրոնցովսկայա փողոցների անկիւնում, տ. Մալաֆէեվի) բացվում է

ՆՈՐ ԽՈՀԱՆՈՑ

յատկապէս տնային ճաշ պատրաստելու համար։—Կը պատրաստվեն թէ եւրոպական եւ թէ ժանաւանդ հայկական ժաքուր, համեղ կերակուրներ, իսկ գները լինելու են համեմատաբար էժան, քան թէ հիւրանոցներում։ Ցանկացողներին կուղարկվի տները՝ մեր ծառայով եւ բոլոր յարմարութիւններով։ Ամսով ճաշողները կիրակի օրերին կը ստանան քաղցրեղէն ձրի։ Կընդունվեն նաեւ առանձին պատուէրներ։ 2—6

Տնայնագործական Արդիւնաբերութեան Գործիչների

համաժողովը բացվում է հոկտեմբերի 9-ին, երեկոյեան 7½ ժամին, Կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան չինութեան մէջ։ Տեղեկութիւններ կարելի է ստանալ ամենայն օր համաժողովի բիւրոյի քարտուղար պ. Վ. Ա. Վասիլեվից (Կառավարչապետի դիւանատանը) ժամի 11-ից մինչեւ 3-ը, եւ իշխանուհի Մ. Մ. Թումանեանից (Բարեատինսկայա փող., սեփ. տուն), ժամի 6-ից մինչեւ 7-ը երեկոյեան։ 3—3

ԲԺԻՇԿ ԲՈՒԴՈՒՂԵԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊԱՀԵՍՏԸ
Յանձնված է Թիֆլիսում Կենտրոնական գրավաճառանոցին,
ուր հրաւիրվում են գիմել ցանկացողները
ՆՈՐԵՐՍ ԼՈՑՍ ՏԵՍԱՆ՝

«Մարմնամարզութիւն» (25 պատկերով)—գինն է 20 կոպ., «Մարմնամարզութեան աղիւսակ-պատկերներ»—գ. 10 կ., «Ժառանգականութիւն եւ դաստիարակութիւն»—գ. 15 կ. եւ «Մանկավարժական հանրօգուտ զրոյցներ»—գ. 15 կ. Նաեւ միւս աշխատութիւնները.—«Առողջ հոգին առողջ մարմնի մէջ»—գ. 10 կ., «Գեղձախտ—զօլտուխա»—գ. 10 կ., «Ո՞վ է յանցաւորը»—գ. 15 կ., «Սիֆիլիս»—10 կոպ., «Մեր նեարդերը»—10 կ. եւ «Վեներական ախտեր»—գ. 5 կոպ.։

Գրավաճառներին եւ գումարով գնողներին զիջումն է լինում։

Դիմել՝ Въ Тифлисѣ. Въ Центральную книжную торговлю. (հ.) 3—10

ՇՈՒՏՈՎ ԼՈՑՍ ԿԸ ՏԵՍՆԻ
„ՍՈՒԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ“

Ազգային լիակատար երգարանի առաջին հատորը՝ հինգերորդ տպագրութեամբ։ Սոյն հատորի մէջ տպագրվում են, բացի բոլոր գործածական երգերից, նոյնպէս եւ նոր երգեր, եւ բանաստեղծութիւններ, թւով 300-ից աւելի։ Զը նայելով գրքի մեծութեանը, նրա իւրաքանչիւր օրինակի գինը,—ամենքին մատչելի դարձնելու համար,—նշանակում ենք մի բուբլի, կանխիկ վճարելով։ Ցանկացողները դիմում են ԲԱԳՈՒ, «Սուքակի» հրատարակչին, սոյն հասցէով. Протоіерею Григорію Григоріанцъ, БАКУ. 3—5

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԵՂԲ. ՄԷԼԻՔ-ՄԱՐՈՒԹԵԱՆՑ
Թիֆլիսի բաժանմունք Բագումի։ Պարապետ։

Պատիւ ունենք յայտնելու, որ մեր խանութում վաճառվում են ամեն տեսակ պատրաստի սպիտակեղէն կանանց եւ տղամարդկանց, ֆուֆայկաներ, չուլկիներ, նասկիներ, ձեռնոցներ, միտաւի կլէօնկաներ սեղանի համար։ Նոյնպէս բաւթաներ, դայթաններ սեփական գործարանում պատրաստված, կանանց գլխի սարքեր, այսինքն չիքիլաներ, հաչիաներ, մեռաքսէ աղլուխներ եւ այլն։

ԳՆԵՐԸ ՉԱՓԱՒՈՐ ԵՒ ԱՌԱՆՑ ՍԱԿԱՐԿՈՒԹԵԱՆ 4—10

ՄԱՍՆԱԳԻՏ ՄԱՍՍԱԺԻՍՏՈՒՀԻ
ԱՂԱՒՆԻ ՍԻՐՈՒՆԵԱՆ

Բժիշկների ցուցումով մասաժի սէանսներ է անում կանանց։ Հասցէն իմանալ բժշկապետ Ա. Բարայեանի բնակարանում (Սերգիեվսկայա փող., № 14, ժամը 10—12 առ.)։
6—6

Ատամի եւ բերանի խոռոչի հիւանդութիւնների
ԲԺԻՇԿ Ն. ԿԱՃԿԱՃԵԱՆ

վերադարձաւ եւ ընդունում է հիւանդների։ Երեւանեան հրապարակ, տուն Խարազեանի, «Ройновъ»-ի լուսանկարչական գործարանի տակը։

Эриванская площадь, домъ Харазова.

# КОНКУРСЪ

по составленію эскизнаго проекта народнаго дома имени Константина Яковлевича Зубалова, въ г. Тифлисѣ.

Комитетъ по постройкѣ народнаго дома въ г. Тифлисѣ, состоящій при тифлисскомъ обществѣ трезвости, объявляетъ конкурсъ для всѣхъ желающихъ на составленіе эскизнаго проекта народнаго дома на слѣдующихъ условіяхъ:

1) Народный домъ предположено построить въ X участкѣ г. Тифлиса, на углу Кирочной и Великокняжеской улицъ, на участкѣ мѣрою 563 квадр. саж. Участокъ безъ покатости, горизонтальный. Ширина улицъ, безъ тротуаровъ—пять саженъ. Ширина тротуаровъ—два арш. Длина фасадовъ участка: по Кирочной улицѣ—23,82 саж., а по Великокняжеской—23,6 саж. Планъ участка составленъ городскимъ землемѣромъ Ларіоновымъ.

2) Народный домъ долженъ вмѣстить въ себѣ: а) залъ со сценой на 600 человѣкъ; залъ этотъ долженъ служить для сценическихъ представленій, чтеній, а также для танцовальныхъ, дѣтскихъ и т. п. собраній. При сценѣ должны имѣться всѣ необходимыя помѣщенія, связанныя съ сценическими представленіями: уборныя и т. п. Помѣщенія эти могутъ быть расположены и подъ сценой; б) чайную на 200 человѣкъ; в) читальный залъ на 50 человѣкъ съ отдѣльными помѣщеніями для библіотеки и книжнаго склада; г) помѣщеніе для сторожей. При проектированіи должно имѣть въ виду расширеніе зданія въ будущемъ устройствомъ народной столовой съ кухней.

3) На постройку дома ассигновано наслѣдниками К. Я. Зубалова семьдесять тысячъ рублей.

Фасадъ съ главнымъ входомъ примыкаетъ непосредственно къ улицѣ. Фасадъ по другой улицѣ долженъ отступать на четыре сажени для устройства садика. Между зданіемъ народнаго дома и границами сосѣднихъ участковъ должны быть оставлены проѣзды минимальной требуемой стр. уставомъ ширины.

4) За лучшіе проекты наслѣдники К. Я. Зубалова устанавливаютъ двѣ преміи: въ пятьсотъ и триста рублей. Преміи эти будутъ выданы по постановленію особаго жюри въ Тифлисѣ, гдѣ состоится конкурсъ. Въ члены жюри не будутъ входить ни жертвователи, ни члены комитета, и рѣшеніе названнаго жюри по присужденію премій будетъ окончательное.

5) Конкурсъ можетъ состояться только по представленіи не менѣе трехъ проектовъ, при чемъ жюри имѣетъ право признать конкурсъ несостоявшимся, если найдетъ представленные проекты неудовлетворяющими требованіямъ, предъявляемымъ къ народнымъ домамъ вообще, или по другимъ причинамъ.

Жюри имѣетъ право подраздѣлить первую премію на двѣ равныя или неравныя части по своему усмотрѣнію, если изъ представленныхъ проектовъ не найдетъ достойнаго первой преміи. Составъ жюри будетъ объявленъ по образованіи его.

6) Всѣ премированные проекты поступаютъ въ полную собственность комитета. Непремированные проекты могутъ быть пріобрѣтены комитетомъ по свободному соглашенію послѣдняго съ авторами ихъ, если таковое пріобрѣтеніе признано будетъ желательнымъ комитетомъ.

7) Автору перваго премированнаго проекта, а за отказомъ его—автору второго комитетъ предложитъ разработку окончательнаго проекта по постройкѣ дома съ правомъ пользоваться всѣми премированными проектами, при условіи внесенія въ эскизные проекты всѣхъ измѣненій, какія найдетъ нужными комитетъ. Вознагражденіе за этотъ трудъ комитетъ назначаетъ въ размѣрѣ 1% съ ассигнованныхъ 70,000 руб. Что касается техническаго надзора за производствомъ работъ по постройкѣ, то выборъ лица для этого всецѣло зависитъ отъ наслѣдниковъ К. Я. Зубалова, принимающихъ на себя всецѣло хозяйственную и финансовую сторону осуществленія постройки, съ участіемъ одного члена комитета по выбору послѣдняго.

8) Эскизный проектъ долженъ состоять изъ фасадовъ, плановъ, разрѣзовъ—въ установленномъ масштабѣ, съ пояснительной запиской и краткой смѣтой.

9) Конкурсъ состоится въ г. Тифлисѣ, при чемъ всѣ проекты должны быть представлены не позже 12 часовъ дня 2 февраля 1902 года на имя члена комитета Георгія Михайловича Туманова по адресу: г. Тифлисъ, Барятинская улица, домъ кн. Туманова.

Всѣ чертежи, записки и смѣты должны быть ясно помѣчены девизомъ или знакомъ. Подъ тѣмъ же девизомъ или знакомъ представляется въ нахлухо запечатанномъ конвертѣ—званіе, имя, отчество и фамилія автора, а также его подробный адресъ.

10) Преміи выдаются комитетомъ въ двухнедѣльный срокъ со дня объявленіи комитету рѣшенія жюри.

11) Жюри имѣетъ право пригласить въ свои засѣданія по оцѣнкѣ проектомъ всѣхъ лицъ, коихъ оно найдетъ полезными для себя, но безъ права голоса.

12) Желающіе участвовать въ конкурсѣ могутъ получать копіи плана мѣста и другія свѣдѣнія отъ Георгія Михайловича Туманова.

13) Непремированные проекты возвращаются авторамъ по предъявленіи расписокъ почтовыхъ или выданныхъ комитетомъ, безъ вскрытія конвертовъ. Р. 3—1

Дозволено цензурою, Тифлисъ, 9 Октября 1901 г.
Электропечатня Грузин. Изд. Т—ва, Б.-Ванкская ул.